ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 փետրվարի 2022թ. թիվ 69-Ա

Ա. ԵՐԻՑՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի թիվ 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետը և հաշվի առնելով «ՀՀ Լոռու մարզի Արևածագի Կ.Մելիքսեթյանի անվան միջնակարգ դպրոց» և «ՀՀ Լոռու մարզի Ծաթերի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ների կառավարման խորհրդի նախագահի 2022 թվականի փետրվարի 2-ի գրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Արմինե Ժորայի Երիցյանին վերանշանակել «ՀՀ Լոռու մարզի Արևածագի Կ. Մելիքսեթյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում և նրա հետ 2017 թվականի ապրիլի 3-ին կնքած աշխատանքային պայմանագրի ժամկետը երկարաձգել հինգ տարի ժամկետով՝ մինչև 2027 թվականի ապրիլի 3-ը ներառյալ:
2. Ա.Երիցյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի ապրիլի 4-ից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

03/02/2022

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2022թ. փետրվարի 3
ք.Վանաձոր